«ԳՐԱՆՑՎԱԾ Է»
ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
2 հուլիսի 2005 Թ.
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 12405244

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

21 հունիսի 2005 թ. N 1-05/06-Ն
ք. Երևան

Հ Ր Ա Մ Ա Ն

ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՁԵՎԸ ԵՎ ԴՐԱ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (24 մարտի 2000 թվականի, ՀՕ-40) 5-րդ հոդվածի 2-րդ մասը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝ ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարի հաշվարկի ձևը և դրա լրացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարի 2000 թվականի հուլիսի 24-ի «Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարի հաշվարկի ձևը և դրա լրացման կարգը հաստատելու մասին» N 02/674 հրամանը:

ՀՀ կառավարությանն առընթեր
հարկային պետական
ծառայության պետ՝ **Ֆ. Ցոլակյան**

Հավելված
ՀՀ կառավարությանն առընթեր
հարկային պետական ծառայության
պետի 2005 թվականի հունիսի 21-ի
N 1-05/06-Ն հրամանի

ՀԱՇՎԱՐԿ ԾԽԱԽՈՏԻ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ	Փաստաթղթի հերթական համարը N _____ (լրացվում է հարկային մարմնի կողմից)
Հաշվետու ժամանակաշրջանը	[1] 200 __ թ. _____ ամիս
Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	[2]
Իրավաբանական անձի անվանումը	[3] _____
Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	[4]
Գտնվելու վայրը	[5]
Հեռախոսահամարը	[6]

[7] Եթե հաշվետու ամսվա ընթացքում ոչ մի գործարք չի կատարվել՝ վանդակում նշել «X» և ներկայացնել հաշվարկը

Ապրանքի ծածկագիրն ըստ ԱՏԳ	Ապրանքի անվանումը	քանակը (դրամ)	Հաստատագրված վճարի չափը՝ հազար հատի համար	Հաստատագրված վճարի գումարը (դրամ)
2402 10 000 11	Սիգարներ՝ ծխախոտ պարունակող [8]	[9]	[10]	
2402 90 000 11	սիգարներ՝ այլ [11]	[12]	[13]	
2402 10 000 12	սիգարելաներ՝ ծխախոտ պարունակող [14]	[15]	[16]	
2402 90 000 12	սիգարներ՝ այլ [17]	[18]	[19]	
2402 20 900 11	սիգարետներ՝ ծխախոտ պարունակող, ֆիլտրով [20]	[21]	[22]	
2402 20 900 11	սիգարետներ՝ մեխակ պարունակող, ֆիլտրով [23]	[24]	[25]	
2402 90 000 13	սիգարետներ՝ այլ, ֆիլտրով [26]	[27]	[28]	
2402 20 900 12	սիգարետներ՝ ծխախոտ պարունակող, առանց ֆիլտրի [29]	[30]	[31]	
2402 20 100 12	սիգարետներ՝ մեխակ պարունակող, առանց ֆիլտրի [32]	[33]	[34]	
2402 90 000 14	սիգարետներ՝ այլ, առանց ֆիլտրի [35]	[36]	[37]	
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համար [38]				
Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ծխախոտի արտադրանքի արտադրության գծով ապրանքների և ծառայությունների գնումների դիմաց ստացված՝ այլ մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարը հաշվետու ամսում (դրամ)			(39)	

Հաշվետու ամսվա համար հաստատագրված վճարի գումար (դրամ)	[40] Ենթակա է բյուջե վճարման	[41] Ենթակա է հաշվանցման

Տնօրեն (անհատ ձեռնարկատեր) _____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

Գլխավոր հաշվապահ _____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

Կ.Տ. ___ _____ 200 թ.

(Հավելվածը փոփ. 15.02.11 N 56-Ն)

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ԼՐԱՑՄԱՆ

Հաշվարկի «փաստաթղթի հերթական համարը» վանդակը լրացվում է հարկային մարմնի կողմից:

[1] Նշվում է հաշվետու ամիսը:

[2] Նշվում է հաստատագրված վճար վճարողին հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ):

[3] Լրացվում է հաստատագրված վճար վճարող համարվող իրավաբանական անձի լրիվ անվանումը:

[4] Լրացվում է հաստատագրված վճար վճարող համարվող անհատ ձեռնարկատիրոջ անուն, ազգանունը:

[5] Լրացվում է հաստատագրված վճար վճարողի գտնվելու վայրը:

[6] Լրացվում է հաստատագրված վճար վճարող համարվողի հեռախոսահամարը:

[7] Եթե հաշվետու ամսվա ընթացքում հաստատագրված վճարով հարկվող ոչ մի գործարք չի կատարվել՝ լրացվում է հաշվարկի մինչև [6] տողը ներառյալ, [7] վանդակում նշվում է «X» և ներկայացվում հարկային մարմին:

[8], [11], [14], [17], [20], [23], [26], [29], [32] և [35] վանդակներում լրացվում է հաշվետու ամսում հարկ վճարողի կողմից Հայաստանի Հանրապետությունում արտադրված և իրացված ծխախոտի արտադրանքի քանակը՝ հազար հատերով (հատիկ սիգարետ, այլ ոչ թե տուփով):

[9], [12], [15], [18], [21], [24], [27], [30], [33] և [36] վանդակներում լրացվում է օրենքով սահմանված հաստատագրված վճարի չափը՝ յուրաքանչյուր 1000 հատի համար:

[10], [13], [16], [19], [22], [25], [28], [31], [34] և [37] վանդակներում լրացվում է հաստատագրված վճարի գումարը, որոշված որպես՝

- [10] վանդակում՝ [8] և [9],
- [13] վանդակում՝ [11] և [12],
- [16] վանդակում՝ [14] և [15],
- [19] վանդակում՝ [17] և [18],
- [22] վանդակում՝ [20] և [21],
- [25] վանդակում՝ [23] և [24],
- [28] վանդակում՝ [26] և [27],
- [31] վանդակում՝ [29] և [30],
- [34] վանդակում՝ [32] և [33],
- [37] վանդակում՝ [35] և [36] վանդակներում նշված թվերի արտադրյալ՝ արտահայտված դրամով:

[38] Լրացվում է [10], [13], [16], [19], [22], [25], [28], [31], [34] և [37] վանդակների հանրագումարը՝ դրամով:

[39] Լրացվում է հաստատագրված վճար վճարողների կողմից հաշվետու ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ծխախոտի արտադրանքի արտադրության գծով ապրանքների և ծառայությունների գնումների դիմաց ստացված՝ այլ մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված հաշվանցման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարը՝ դրամով:

[40] Լրացվում է հաշվետու ամսվա արդյունքներով բյուջե վճարման ենթակա հաստատագրված վճարի գումարը՝ դրամով, որպես [38] և [39] վանդակներում նշված թվերի տարբերությունը, եթե [38]>[39]: Եթե [38]<[39], ապա վանդակը չի լրացվում:

[41] Լրացվում է հաշվետու ամսվա արդյունքներով հաշվանցման ենթակա հաստատագրված վճարի գումարը՝ դրամով, որպես [38] և [39] վանդակներում նշված թվերի տարբերությունը, եթե [38]<[39]: Եթե [38]>[39], ապա վանդակը չի լրացվում: